ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Երվանդաշատ, (093) 197080, yervandashat.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 33-Ա

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով Երվանդաշատ համայնքի

Ավագանին որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 04-ի N 8 հերթական նիստի օրակարգի 33, 34, 35, 36, 37 հարցերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	Կողմ -5	Դեմ -0	Ձեռնպահ -0
ԱԹՈՅԱՆ ԳԱԳԻԿ			
ԱՓՐԻԿՅԱՆ ՅՈՒՐԻԿ			
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԶԱՎԵՆ			
ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ			
ՇԱՀԻՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Երվանդաշատ
համայնքի ավագանու 2020 թվականի
դեկտեմբերի 04-ի N 8 նիստի N 33-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

1.Երվանդաշատ համայնքի ավագանու N 8 նիստի օրակարգը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Ավետիսյան/

2.Երվանդաշատ համայնքի ղեկավարի վարձատրության չափը հաստատելու մասի:

/Զեկուցող՝ Հ. Ավետիսյան/

3. Երվանդաշատ համայնքի ղեկավարի, համայնքի ղեկավարի աշխատակազմի և նրա ենթակա բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Ավետիսյան/

4.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Ավետիսյան/

5. Համայնքի ղեկավարի նկատմամբ խրախուսանք կիրառելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Ավետիսյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Երվանդաշատ, (093) 197080, yervandashat.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 34-Ա

ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ կետի դրույթներով Երվանդաշատ համայնքի

Ավագանին որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի ղեկավարի ամսական վարձատրության չափը 200000 ՀՀ դրամ՝ 2021 թվականի օրացուցային տարվա համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԹՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՓՐԻԿՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԶԱՎԵՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Երվանդաշատ, (093) 197080, yervandashat.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 35-Ա

ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՆՐԱ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետի դրույթներով Երվանդաշատ համայնքի

Ավագանին որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2021 թվականի բյուջետային տարվա համար՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԹՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՓՐԻԿՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԶԱՎԵՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՎՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Երվանդաշատ
համայնքի ավագանու 2020 թվականի
դեկտեմբերի 04-ի N 35-Ա որոշման

2021 ԹՎԱԿԱՆԻ

Երվանդաշատ համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 9
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

h/h	ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաստիքային միավորը	Պաշտոնի դրույք
1	Համայնքի ղեկավար	1	200000
	Ընդամենը	1	
	ԱՇԽԱՏԱԿԱԶՄ		
1	Աշխատակազմի քարտուղար	1	150000
2	Գլխավոր մասնագետ	1	148000
3	Առաջատար մասնագետ	1	92618
	Ընդամենը	3	
	ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ		
1	Մշակույթի տան տնօրեն	1	92618
	Ընդամենը	1	
	ԳՐԱԴԱՐԱՆ		
1	Գրադարանավար	0.5	46309
	Ընդամենը	1	
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
1	Համայնքի ղեկավարի օգնական	1	150000
2	Օպերատոր	1	92618
3	Հավաքարար	1	92618
	Ընդամենը	3	
Ընդամենը		9	1064781

Համայնքի ղեկավար / Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Երվանդաշատ, (093) 197080, yervandashat.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 36-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ հոդվածներով, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և հիմք ընդունելով 2020 թվականի դեկտեմբերի 03-ի թիվ 06/27.1/27043-2020 ՀՀ արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը Երվանդաշատ համայնքի

Ավագանին որոշում է

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

2.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝
հիմնական օբյեկտների համար՝
1)մինչև 300քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ տեղական տուրք սահմանել 5.001 /հինգ հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ:
3.Սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

1) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տեղական տուրք սահմանել 10.001 /տաս հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ
2) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տեղական տուրք սահմանել 15.001/տասնհինգ հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ
3) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տեղական տուրք սահմանել 20.001 /քսան հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ
4)3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տեղական տուրք սահմանել 25.001 /քսանհինգ հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ.
5) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
5.1)մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրք սահմանել 0/զրո/ Հայաստանի Հանրապետության դրամ.
5.2)20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրք սահմանել 0/զրո/ Հայաստանի Հանրապետության դրամ:

4.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
1)չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների(այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության համար 0/զրո/ դրամ.
2)բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար <Տեղական տուրքերի և վճարների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.
3)նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների(այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

5. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական

տուրքը սահմանել 5.001 /հինգ հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ:

6. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝
1)ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 4.001 /չորս հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ
1.1) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 4.001/չորս հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ
1.2) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 10.001 /տաս հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ
1.3) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 13.001 /տասներեք հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ
1.4) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 20.001 /քսան հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ
1.5) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 25.001 /քսան հինգ հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ
1.6) 501-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 45.001 /քառասուն հինգ հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ

2)Օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար՝
2.1) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 0/զրո/ Հայաստանի Հանրապետության դրամ
2.2) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 10.001 /տաս հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ
2.3) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 13.001 /տասներեք հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ
2.4) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 20.001 /քսան հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ
2.5) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 25.001/ քսան հինգ հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ
2.6) 501-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 45.001 /քառասուն հինգ հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ

7.Համայնքի տարածքում բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 0 /զրո/ Հայաստանի Հանրապետության դրամ
8.Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրք յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
1)հիմնական շինությունների ներսում՝
1.1) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 0/զրո/ Հայաստանի Հանրապետության դրամ
1.2) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5.001 /հինգ հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ
1.3) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10.001 /տաս հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ
1.4) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.001 /տասնհինգ հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ
1.5) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20.001/քսան հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ
1.6) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30.001 /երեսուն հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ
2)ոչ հիմնական շինությունների ներսում՝
2.1) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 0/զրո/ Հայաստանի Հանրապետության դրամ
2.2) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1.001/հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ
2.3) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2.001/երկու հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ
2.4) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4.001/չորս հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ
2.5) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8.001 /ութ հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ
2.6) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.001/տասնհինգ հազար մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ

3)Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000/հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:
4)Խանութներում,կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ

հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում, տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 000 /տաս հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

9.Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50.000/հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

10.Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
1)առևտրի օբյեկտների համար՝ 25 000 /քսան հինգ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ
2)հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000/հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ
3)բաղնիքների (սաունաների) համար 200 000 /երկու հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ
4)խաղատների կազմակերպման համար՝ 500 000/հինգ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ
5)շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000/ երկու հարյուր հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ
6)վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 /հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

11.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
1)ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 /մեկ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ
2)թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 /երկու հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ
3)այլ արտաքին գովազդի համար՝ 500/հինգ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ
4)սոցիալական գովազդի համար՝ 0 /զրո/ Հայաստանի Հանրապետության դրամ:

12.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, սահմանված տուրքի 25%-ի չափով 125 Հայաստանի Հանրապետության դրամ:

13.Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ը այդ գովազդի մակերեսին համապատասխան 50 Հայաստանի Հանրապետության դրամ:

14.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանել 0/զրո/ Հայաստանի Հանրապետության դրամ:

15.Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 /հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

16.Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանել 3000/երեք հազար/ դրամ:

17.Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ)մատուցելու թույլտվության համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է 0/զրո/դրամ

18.Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվուվ է յուրաքանչյուր տարվա համար՝
1) 3հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար երկու միլիոն հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ
2) 5հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ
3) 7հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար յոթ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ
4) 10 հա-ից ավելի մակերես ունեցող գերեզմանատների համար տաս միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ:

19.Համայնքի տարածքում շինարարության կամ շինարարության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար, տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար, տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել 0/զրո/ Հայաստանի Հանրապետության դրամ:

20.Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝

տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 0/զրո/ Հայաստանի Հանրապետության դրամ:

21.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանել 5000/հինգ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

22.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանվում է.
1)կենցաղային աղբի համար՝
1.1)ըստ հաշվառված անձանց քանակի համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար առավելագույնն ամսական 100 /հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ
1.2)ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 0 /զրո/ Հայաստանի Հանրապետության դրամ
2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ 0 /զրո/ Հայաստանի Հանրապետության դրամ
2.1)ըստ ծավալի մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 0 /զրո/ Հայաստանի Հանրապետության դրամ
2.2)ըստ զանգվածի մեկ տոննա աղբի համար՝ 0/զրո/ Հայաստանի Հանրապետության դրամ:

23.Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանվում է՝ 0 /զրո/ Հայաստանի Հանրապետության դրամ:

24.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՆԵՐ Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԱԹՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՓՐԻԿՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԶԱՎԵՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀՈՎՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Երվանդաշատ, (093) 197080, yervandashat.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 37-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Աշխատանքային օրենսգրքի>> 219-րդ հոդվածի 2-րդ կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետի դրույթներով Երվանդաշատ համայնքի

Ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի 2020 թվականի բյուջեի եկամուտները բարձր ցուցանիշներով հավաքագրելու, աշխատանքային պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար, համայնքի 2020 թվականի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ>> գումարից համայնքի ղեկավարի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ մեկ ամսվա աշխատավարձի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԹՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՓՐԻԿՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԶԱՎԵՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ